

## Թուրքական պատմագիտական ընկերության ստեղծման քաղաքական ու գաղափարական նախադրյալները

Առաջին համաշխարհային պատերազմից հետո 1919 – 1922թթ. Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի տարածաշրջանում ծավալված քեմալական շարժման (milli hareket) արդյունքում կազմավորվեց Թուրքիայի Հանրապետությունը<sup>6</sup>: 1923թ. հոկտեմբերի 29-ին հռչակվեց Թուրքիայի Հանրապետությունը, որի առաջին նախագահ ընտրվեց Մուսթաֆա Քեմալ Փաշան (Աթաթուրք) և հենց ինքն էլ նույն օրը վարչապետ նշանակեց Իսմեթ Փաշային (Ինոնյույին)<sup>7</sup>: Մինչ այդ 1923թ. հունվարի 6-ին Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը հանդես եկավ նոր քաղաքական ուժի՝ ժողովրդական կուսակցության (ԺԿ) ստեղծման մասին հայտարարությամբ<sup>8</sup>: Խոսելով ԺԿ-ի գործունեության ոլորտների մասին Քեմալը նշում էր, որ ժողովրդական կուսակցությունը պարտավորվում է Թուրքիային հաղորդակից դարձնել ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գործընթացներին և այդ բնագավառում ապա-

<sup>6</sup> А.Шамстудинов, *Турецкая Республика. Москва, 1962. с. 12*

<sup>7</sup> Afetinan A., "Türkiye Cumhuriyeti Devleti", *Belleter, Cilt: XLVII, Ekim 1983, Sa. 188, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1984. s.926, ss. 1234.*

<sup>8</sup> Рустамов Ю., „Современная турецкая буржуазная социология,, , Баку. Изд. АН Азерб. ССР. 1967, с. 153

հովել նրա վերելքը<sup>9</sup>: 1924 թվականին ժողովրդական կուսակցությունը վերանվանվում է ժողովրդահանրապետական կուսակցություն (ԺՀԿ): Այդ ժամանակաշրջանում Թուրքիայում սոցիալ - քաղաքական իրավիճակն այնպիսին էր, որ անհրաժեշտ էր ստեղծել մի կազմակերպություն, որը ժողովրդի շրջանում կարող էր քարոզել պաշտոնական (պետական) գաղափարախոսությունը՝ քեմալիզմի գաղափարախոսությունը: XXդ. սկզբին քեմալիզմը կարիք էր զգում ակտիվ քարոզչության և փորձում էր իր իշխանությունը հաստատել բոլոր բնագավառներում: Պարզ երևում էր, որ քեմալական շարժումը նոր աղետներ է բերելու երկրի ոչ թուրք ժողովուրդներին: Լինելով կատաղի ազգայնամուլներ քեմալականները հենց սկզբից ոտնահարեցին հույների, արաբների, հայերի, լազերի, քրդերի մարդկային տարրական իրավունքները<sup>10</sup>: Հենց այդ ոգով էլ թուրքական իշխանությունները փորձում էին դաստիարակել նոր սերունդներին:

Դա տեղի էր ուենում այն պարզ պատճառով, որ քեմալականները Թուրքիայի քաղաքական կյանքում էական տեղ էին հատկացնում ազգայնականության սկզբունքին: Այն հնարավոր էր կիրառել ինչպես ազ-

<sup>9</sup> *Atatürk'ün Söylev ve Demeçleri*, c. 2, Ankara, 1959, s. 189

<sup>10</sup> Աիմոնյան, Դր.Ռ., «Թուրք Ազգային Բուրժուազիայի Գաղափարաբանությունը և Քաղաքականությունը», *Հա-յաստան Դրատարակչություն, Երևան 1986թ., էջ 487-488:*

գային պետության գաղափարախոսության, այնպես էլ այդ գաղափարախոսության ամենագրեսիվ, անհանդուրժողական տարբերակի իմաստով:

Մուսթաֆա Քեմալի նախաձեռնությամբ հիմնադրված ժողովրդահանրապետական կուսակցության նպատակներից էր կազմավորել կուսակցական կառույցները և ապարատը, կենտրոնացնել պետական և կուսակցական իշխանությունը, մշակել գաղափարախոսությունը, հաստատել կուսակցության գերակայությունը պետական քաղաքականության մեջ և խստացնել միակուսակցական վարչակարգը: Այս ամենի և հատկապես թուրքական պետության ստեղծման արդյունքում ստեղծվեց քեմալական գաղափարախոսությունը, որն իր մեջ ներառում էր խիստ ազգայնական տարրեր:<sup>11</sup> Հարկ է նշել, որ թուրք պատմաբան Հալիլ Բերկթայն իր նշված հրապարակումներում համեմատաբար ավելի օյեկտիվ է ներկայացնում թուրքական իշխանությունների գործունեությունը և մտահղացումները:

Մուստաֆա Քեմալը վերցնելով Գյոքալփի թյուրքիզմի ազգայնականության տարրերը, զարգացնելով այն, թուրքական ազգայնականությունն առանձնացրեց պանթյուրքիզմից: Դրա մի պարզ օրինակ է Ադանայի արհեստակցական ընկերությունների հետ հան-

---

<sup>11</sup> *Berktaş H., Cumhuriyet İdeolojisi ve Fuat Köprülü, Kaynak Yayınları, İstanbul, 1983, s. 13, ss. 111.*

դիպման ընթացքում Աթաթուրքի արտահայտած հետևյալ խոսքերը. «Մեր ընկերներն ասել են, որ հայերը օկուպացրել են մեր արվեստի կենտրոնները, երկրի տիրոջ կարգավիճակով իրենց համար մեծ հնարավորություններ են ստեղծել: Անկասկած ավելի մեծ անօրինականություն և անպատկառություն չէր կարող լինել: Հայերն այս բերրի երկրում ոչ մի իրավունք չունեն: Ձեր երկիրը ձերն է, թուրքերինն է: Այս երկիրը եղել է թուրքերինը, այժմ էլ թուրքերինն է և ապագայում էլ թուրքերինն է լինելու: Հայերը և մյուսներն այս երկրում իրավունքներ չունեն: Այս բարեբեր վայրերը իսկական և հարազատ Թուրքիան է»:<sup>12</sup>

Այսպիսով, ասպարեզ հանվեց քեմալիզմի չորս «հիմնաքարից» և «վեց սկզբունքից» բաղկացած գաղափարական համակարգը: Դրա համաձայն, Թուրքիայի Հանրապետությունը չորս «հիմնաքարերի» վրա է հենվում.

1) հայրենիք 2) ազգ 3) հանրապետություն 4) սոցիալական իրավունքներ:

Քեմալականները կիրառում էին նաև քեմալիզմի վեց սկզբունքները՝ ազգայնականությունը, ժողովրդականությունը, պետականությունը, աշխարհիկությունը (laiklik), հեղափոխականությունը, ինչպես նաև մեր օրերի աթաթուրքականության (atatürkçülüşünüş)

<sup>12</sup> *Atatürkün Söylev ve Demeçleri II, ikinci bası, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1959, s. 126, ss. 290,*

գաղափարախոսությունը, որոնք տարբեր թուրք հեղինակների կողմից մեկնաբանվել և ներկայացվել են յուրովի:<sup>13</sup>

Քեմալիզմի գաղափարախոսներից Թեքին Ալփը նշել է. «Քեմալիզմի հիմքը կազմում և նրա զարգացման տարր է հանդիսանում թուրքական ազգայնականությունը», իսկ Աթաթուրքի ազգայնական գաղափարախոսության ընկալումը Թեքին Ալփը ներկայացնում է որպես «մշակութային ազգայնականություն»<sup>14</sup>:

Քեմալականները օգտագործում էին այն «ազգային պետության» հասկացության առումով, որն արտահայտում էր ծագումով, լեզվով և մշակույթով միատարր բնակչությունից կազմված պետության գաղափարը: Այն մուտք է գործել Թուրքիա Արևմուտքից XX դարի սկզբին՝ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից և Օսմանյան կայսրության փլուզումից հետո դառնալով ժամանակակից Թուրքիայի քաղաքական մտքի գերակայող հոսանքներից մեկը, եթե ոչ հիմնականը<sup>15</sup>:

---

<sup>13</sup> *Այդ մասին տես Belleten, Cilt: XLVI, Sayı: 177, Ocak 1981, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1981, s. 228, ss. 419,*

<sup>14</sup> *Այդ մասին տես Atatürk Söyğü, Türk Dil Kurumu Yayınları:288, Ankara Üniversitesi Basımevi, 1969, s.54-55, ss.520,*

<sup>15</sup> *Բաղդասարյան Ա. Կ., «Թուրքիայի Քաղաքական Ֆանակարզը 1920-1930-ական թթ.-ին», Ատենախոսություն, 77 ՉԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան 2000թ., էջ 59-60:*

Թուրք պատմաբան Նեջաթ Քայնազը նշում է, որ Թուրքիայում տարվում է պատմությունը մոդեռնիզացնելու և եվրոպականացման քաղաքականություն, այսինքն կայսրությունից անցումը հանրապետության արտացոլվում է նախևառաջ պատմության ոլորտում<sup>16</sup>:

Դրա հիմնական փաստարկն այն է, որ Թուրքիայի Հանրապետության կազմավորման ընթացքում Մուսթաֆա Քեմալի նախաձեռնությամբ 1927թ. ստեղծվեց «Թուրքական պատմագիտական հանձնախումբ» (Türk Tarihi Encümeni), որի միջոցով փորձ էր արվում հանրությանը ներկայացնել թուրքական պատմական «նոր» հայեցակարգը:

Քեմալականները գտնում էին, որ մինչ Աթաթուրքի հանդես գալը թուրք ազգն ուներ պատմական երեք տեսակետ՝ կրոնական, ազնվական, ռասիստական: Սրանցից ամենակարևորը կրոնական տեսակետը մուսուլմանական հանրության պատմությունն էր ներկայացնում: Երկրորդ տեսակետը ազնվականը ներկայացնում էր օսմանյան ընտանիքների պատմությունը, իսկ երրորդը՝ ռասիստականը, նեղ շրջանակների մեջ էր պահում Թուրքիայի պատմությունը<sup>17</sup>: Այսինքն քե-

---

<sup>16</sup> *Şükrü Berktay H., Cumhuriyet İdeolojisi ve Fuat Köprülü, Kaynak Yayınları, İstanbul, 1983, s. 13, ss. 111:*

<sup>17</sup> *Atatürke Saygı, Türk Dil Kurumu Yayınları:ü88, Ankara Üniversitesi Basımevi, 1969, s.97. ss.520,*

մալականների պնդմամբ մինչև Թուրքիայի Հանրապետության ստեղծումը թուրք պատմաբաններին հնարավորություն չի տրվել հասարակությանը ներկայացնելու Թուրքիայի պատմությունը:

1928թ. նոյեմբերի 3-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից ընդունվեց թուրքերենի լատինատառ այբուբենը, որից մեկ տարի հետո դպրոցներում դադարեցվեց արաբերենի և պարսկերենի ուսուցումը: Քեմալականներն այդ ամենի արդյունքում ցանկանում էին անջրպետ ստեղծել Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության միջև, որպեսզի հանրությունը տեսներ և համոզվեր, որ թուրքական նոր իշխանությունները գործադրում են ամեն ջանք նոր Թուրքիա ստեղծելու համար:

1930-ական թվականներին «հանձնաժողովներով» իրենց աշխատանքները սկսեցին Թուրքական պատմագիտական ընկերությունը (Türk Tarih Kurumu) և Թուրքական լեզվաբանական ընկերությունը (Türk Dil Kurumu), որոնք հետագայում Աթաթուրքի նախաձեռնությամբ որպես կազմակերպությունների ստեղծվեցին պաշտոնապես: Թուրքական լեզվաբանական ընկերության ստեղծման նպատակն էր Թուրքիայում մեծացնել հարգանքը թուրքերեն լեզվի նկատմամբ և ապահովել թուրքերենի անկախությունը այլ լեզուներ

րի ազդեցությունից<sup>18</sup>: Աթաթուրքի խոսքերի համա-  
ծայն այդ երկու ընկերությունները Թուրքիայի պատ-  
մության ու լեզվի մութ ու մոռացված հատվածները  
հրապարակ բերելով փորձելու են դրանք ներկայաց-  
նել ամբողջ աշխարհին<sup>19</sup>:

Վերոնշյալ նկատառումներից ելնելով և դրանց  
ազդեցությամբ Թուրքիայի Հանրապետության իշխա-  
նությունները ձեռնամուխ եղան Թուրքական պատ-  
մագիտական ընկերության ստեղծման աշխատանք-  
ներից: Ընկերությունը ստեղծվել է Սուսթաֆա Քեմալ  
Աթաթուրքի անմիջական նախաձեռնությամբ: 1930  
թվականի ապրիլի 23-ին «Թուրքական օջախների» 6-  
րդ համագումարում, որի ընթացքում ելույթ ունեցան  
Աֆեթ (Ինանը), Սադրի Մաքսուդի (Արսալը) և Ռեշիթ  
Գալիփը<sup>20</sup>, դրվեց Թուրքական պատմագիտական ըն-  
կերության հիմնաքարը<sup>21</sup>:

Մինչ հանրապետական Թուրքիայի ստեղծումը  
Օսմանյան կայսրության թե՛ քաղաքական և թե՛ գի-  
տական շրջանակներում մեծ հեղինակություն էր վա-

---

<sup>18</sup> *Türk Dil Kurumunun 10 Yılı, Türk Dil Kurumu Yayınları, Ankara Üniversitesi Basımevi, 1972, s. 15, ss. 186,*

<sup>19</sup> *Tütengil C. O., "Atatürk'ü Anlamak ve Tamamlamak", Varlık Yayınevi, Ankara Caddesi, İstanbul, 1975, s.52-53, ss.238,*

<sup>20</sup> *Այդ մասին տես Berktaş H., Cumhuriyet İdeolojisi ve Fuat Köprülü, Kaynak Yayınları, İstanbul, 1983, s. 52, ss. 111,*

<sup>21</sup> *Տես նույն տեղում, էջ 52:*



յելում Թուրքական օջախներ (Türkocağı) կազմակերպությունը, որը հիմնադրվել է 1912թ. մարտի 12-ին 190 ռազմական ուսանող-բժիշկների անմիջական մասնակցությամբ<sup>22</sup>: Այս կազմակերպության հիմնադրման հետ զուգահեռ Թուրքիայում սկսում է զարթոնք ապրել ազգայնական գաղափարախոսությունը: Թուրքական օջախների ստեղծման նպատակներն արտահայտվում են այդ կազմակերպության կանոնադրության երկրորդ կետում. «Իսլամական ժողովուրդների առաջնորդ հանդիսացող թուրքերն իրենց ազգային դաստիարակությամբ և գիտական, սոցիալական, տնտեսական վիճակի առաջընթացով և վերելքով ձգտում են հասնել թուրքական ցեղի և թուրքերեն լեզվի կատարելության...»: Թուրքական օջախները հիմնադրման պահից զարգացում են ապրել Սիասնություն և Առաջադիմություն կուսակցության (İttihat ve Terakki) և հատկապես էնվեր Փաշայի կողմից տրված նյութական և բարոյական աջակցության շնորհիվ<sup>23</sup>:

Էնվեր Փաշան նյութական օգնություն էր ցուցաբերում ինչպես Թուրքական օջախներ կազմակերպությանը, այնպես էլ թյուրքականության գաղափարախոսու-

---

<sup>22</sup> *Avcıoğlu D., "Milli Kurtuluş Tarihi 1838'den 1995'e", İkinci Kitap (İkinci Baskı), Tekin Yayınları, Yaylacık Matbaası, İstanbul, 1976, s.459, ss.896*

<sup>23</sup> *Aydemir Ş. S., "Makedonya'dan Ortaasya'ya Enver Paşa", İkinci Cilt (1908 - 1914), II Baskı, İstanbul, Remzi Kitabevi, 1976, s. 476, ss. 573,*

յունը դավանողներին: Օրինակ թուրքական պատմագիտական ընկերության արխիվային փաստաթղթերում նշվում է, որ ենվեր Փաշայի ստորագրությամբ 1.000 ոսկի է հատկացվել Քյազիմ Բեյին (Օրբայ), որը զբաղվում էր արդեն իսկ նշված գործերով<sup>24</sup>:

Անդրադառնալով «Թուրքական օջախներ» կազմակերպությանը ռուս պատմաբան Կոլեսնիկովը նշել է, որ 1920 - ական թվականներին Թուրքիայի քաղաքական կյանքում վերստին հրապարակ գալով «Թուրքական օջախներ» կազմակերպությունը շարունակել է պահպանել Օսմանյան կայսրությունում ունեցած հեղինակությունը<sup>25</sup>:

Նախկին Օսմանյան պատմական հանձնաժողովի (հանձնախմբի) (Tarih-i Osmanî Encümeni) իրավաժառանգորդ հանդիսացող Թուրքական պատմական հանձնախմբի (Türk Tarihi Encümeni) կազմավորումից հետո, 1927թ. հուլիսի 6-ի թիվ 5419 որոշմամբ, Կրթության նախարարության կողմից (Maarif Vekâleti) Ստամբուլում, համալսարանի (Darülfünûn) շենքում Ֆուաթ Քյոփրուլյույի նախագահությամբ ձևավորվե-

---

<sup>24</sup> *Sbu նույն տեղում, էջ 478:*

<sup>25</sup> *Колесников А.А., "Народные дома в общественно — политической и культурной жизни турецкой республики", Издательство "Наука", Главная редакция восточной литературы, Москва 1984г., стр. 55, стр. 150,*

ցին և հետագայում կարևոր գործունեություն ծավալեցին հետևյալ կառույցները.

ա) 1930թ. Թուրքական օջախների 6-րդ համագումարի ժամանակ կազմավորվել է Թուրքական օջախներին կից Թուրքական պատմական ուսումնասիրման հանձնախումբը, որը 1930թ. հունիսի 4-ին գումարել է առաջին ժողովը:

բ) Մեկ տարի հետո Թուրքական օջախների փալման կապակցությամբ այդ հանձնախումբը 1931թ. ապրիլի 15-ին վերակազմավորվեց Թուրքական պատմագիտական ուսումնասիրման միության:

գ) 1935թ.-ին այս կազմակերպությունը հայտնի դարձավ որպես Աթաթուրքի կողմից ստեղծված Թուրքական պատմագիտական ընկերություն»<sup>26</sup>:

Այսպիսով վերոնշյալից ակնհայտ երևում է, որ Թուրքիայի Հանրապետության իշխանությունները երկրի կառավարման հիմնական սկզբունքների առումով համարվում են Օսմանյան կայսրության հավատարիմ իրավաժառանգորդ: Նույնիսկ քաղաքական և պատմագիտական կազմակերպություններն իրականում ոչ թե նոր գաղափարների արդյունք են, այլ նախկին կազմակերպությունների անավարտ թողած գործերի շարունակողներ:

1908թ.-ից հետո ստեղծվեցին ազգայնական գա-

---

<sup>26</sup> *Տես նույն տեղում, էջ 57:*

ղափարախոսություն կրող Միասնություն և Առաջադիմություն ակումբները (İttihat ve Terakki Kulüpleri), Թուրքական օջախներ (Türk Ocağı), Թուրքական հայրենիք (տուն) (Türk Yurdu), Դեպի ժողովուրդը (Halka Doğru) կազմակերպությունները<sup>27</sup>:

Թուրքականության (Türkçülük) շարժումը (1908 – 1913թթ.) ներկայացվել է «Թուրքական միություն» կազմակերպության և միևնույն անվանումը կրող ամսագրի, «Թուրքական օջախներ» միության, «Թուրքական հայրենիք» ամսագրի միջոցով (հարկ է նշել, որ այդ շարժմանը ակտիվորեն մասնակցել են նաև այլ կազմակերպություններ և պարբերականներ, որոնցից հատկանշական է «Երիտասարդ գրիչներ» (Genç Kalemler) ամսագիրը): «Թուրքական միություն» կազմակերպությունը ստեղծվել է 1908թ. վերջին, իսկ կազմակերպության կանոնադրությունն ընդունվել է 1909թ. հունվարին: Կազմակերպության հիմնական նպատակն էր ամբողջ թյուրքական աշխարհում տարածել գիտական թյուրքականություն: Այս կապակցությամբ կանոնադրության երկրորդ կետում նշվում է հետևյալը.

«Կազմակերպության հիմնական նպատակն է թյուրքական ծագում ունեցող բոլոր թյուրքալեզու ժողովուրդներին տեղեկացնել անցյալում տեղի ունեցած և

---

<sup>27</sup> Avcıoğlu D., "Millî Kurtuluş Tarihi 1838'den 1995'e", *İkinci Kitap (İkinci Baskı)*, Tekin Yayinevi, Yaylacık Matbaası, İstanbul, 1976, s.459, ss.896

ներկայումս կատարվող գործողություններին, ինչպես նաև ստեղծված իրավիճակին, այսինքն թյուրքերի դարեր ի վեր եկող ազատությանը, լեզվին, ժողովրդական և ընտիր գրականությանը, ազգագրությանը և ազգաբանությանը, քաղաքակրթության ներկա իրավիճակին, թյուրքական երկրների հին և նոր աշխարհագրությունը ուսումնասիրելով արդյունքները հրապարակել ամբողջ աշխարհում, ամեն ջանք գործադրել մեր լեզուն պարզ, գեղեցիկ և գիտական մակարդակի բերելու ուղղությամբ, ինչպես նաև ուղղագրությունը ուսումնասիրել վերոնշյալին համապատասխան»:<sup>28</sup>

Թյուրքականության վերաբերյալ արտահայտվել է նաև Ձիյա Գյոքալփը, ըստ որի թյուրքականությունը (ավելի ընդհանուր ընկալմամբ ազգայնականությունը) համապատասխանում է իսլամական կրոնին և հիմնվելով պատմության ու գաղափարի վրա ուժեղացնում է այն<sup>29</sup>:

20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում թյուրքականության շարժումը ինքնին առաջ բերեց մի իրավիճակ, որն էլ ավելի նպաստավոր պայմաններ էր ստեղծում շարժման հետագա զարգացման համար: Շարժման առաջնորդները առաջ բերեցին մի շարք խնդիրներ, որոնց լուծման հնարավորությունները քա-

---

<sup>28</sup> Bayur Y.H., *Türk Sırdöbi Tar4h4, C4ld III, s.400, ss. 601.*

<sup>29</sup> Bayur Y.H., *Türk Sırdöbi Tar4h4, C4ld II, s.374, ss. 397.*

րոզչության ձևով փորձում էին ներկայացնել հասարակ ժողովրդին:

Այդ խնդիրներից հատկանշական են երկուսը.

1. Կազմակերպել թուրքերի տեղափոխությունը կայսրության մյուս շրջաններից դեպի Անատոլիա,

2. Անհրաժեշտ է փոփոխություն մտցնել պետական պաշտոնյաների մտածելակերպի մեջ<sup>30</sup>:

Բնականաբար այս ամենը քեմալականների կողմից կատարվում էր զուտ նրա համար, որպեսզի հասարակ ժողովրդի շրջանում ավելի մեծ հետաքրքրություն առաջացնեն իրենց նկատմամբ: Քեմալականներն այս խնդիրներից մի քանիսի լուծման ուղղությամբ փորձեցին զբաղվել մասամբ: Հասարակ ժողովրդին այդ և մի շարք այլ խնդիրների վերաբերյալ որոշակի տեղեկատվություն հաղորդելու և անհրաժեշտ քարոզչություն ապահովելու նպատակով որոշվում է ստեղծել մի կազմակերպություն, որը կատարելով պատմագիտական ուսումնասիրություններ կարող է հրատարակել պատմության դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ: Այս ամենի արդյունքում առաջացավ Թուրքական պատմագիտական ընկերության ստեղծման գաղափարը:

---

<sup>30</sup> Այդ մասին տես *Metin H., "Türkiyenin Siyasi Tarihinde Ermeniler ve Ermeni Olayları", Milli Eğitim bakanlığı Yayınları: 2437, Bilim ve Kültür. Eserleri dizisi: 32, Araştırma - İnceleme: 32, İstanbul, 1992, s. 41, ss. 192,*